

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՆԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

6-րդ դասարան

19 փետրվարի 2022թ

1. Առաջին դասարանցիներին բառեր կազմելու համար բաժանում են քարտեր, որոնց մի մասի վրա գրված են «ԼԱ», մնացածների վրա՝ «ՄԱՐ» վանկերը: Բոլոր երեխաները վերցրեցին երեքական քարտ և սկսեցին կազմել բառեր: Պարզվեց, որ «ԼԱԱԱ» բառը կազմել է 25 աշակերտ, «ՄԱՐՄԱՐ» բառը՝ 30 աշակերտ, իսկ «ԼԱՄԱՐ» բառը՝ 36 աշակերտ: Երեխաներից քանիսի՞ բոլոր երեք քարտերն են եղել նույնը: Պարասխանը հիմնավորել:
2. Գտնել բոլոր բնական թվերը, որոնց ամենամեծ և ամենափոքր բաժանարարների (բացի մեկից և իրենից) գումարը 34567 է: Պարասխանը հիմնավորել:
3. Դպրոցի մի քանի աշակերտներ գնացին անտառ սունկ հավաքելու: Վերադառնալիս պարզվեց. եթե Արմենն իր հավաքած սնկի  $\frac{2}{3}$  մասը փար Նարեկին, ապա Նարեկը կունենար 2 անգամ ավելի շատ սունկ, քան մնացած աշակերտներից յուրաքանչյուրը: Եթե Արմենն իր հավաքած ամբողջ սունկը, Արմինեն իր հավաքածի  $\frac{1}{2}$  մասը, Գևորգն իր հավաքածի  $\frac{1}{3}$  մասը, իսկ Նարինեն իր հավաքածի  $\frac{1}{6}$  մասը փային Նայկին, ապա Նայկը կունենար այնքան սունկ, որքան սունկ ունեն մնացած բոլորը միասին: Քանի՞ աշակերտ էր անտառ գնացել: Պարասխանը հիմնավորել:
4. Գրապահարակին գրված են 1-ից մինչև 50 բոլոր բնական թվերը՝ 1, 2, 3, 4, ..., 49, 50: Այդ թվերից որոշները ջնջում են հետևյալ պայմանով. գրապահարակին մնացած թվերից ոչ մեկը չպետք է հավասար լինի գրապահարակին մնացած այլ թվի կրկնապատիկին (օրինակ, եթե գրված է 12 թիվը, ապա 6-ն ու 24-ը չեն կարող գրված լինել): Ամենաշատը քանի՞ թիվ կարող է մնալ գրապահարակին: Պարասխանը հիմնավորել:

Աշխատաժամանակը 3 ժամ

Յուրաքանչյուր խնդիր գնահատվում է առավելագույնը 5 միավոր